



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամլո հաղորդագրություն

Յուլի 12, 2022

Կայացավ գյուղական համայնքների զարգացմանը նվիրված 3-րդ ամենամյա համաժողովը

ԵՐԵՎԱՆ - «Չայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ-ը) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ 2022թ. հուլիսի 8-ին անցկացրեց «Գյուղական համայնքների զարգացում» երրորդ ամենամյա համաժողովը Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում և Դեբետի վարչական շենքում տեղակայված Գրադարակ Դեբետում: Այս տարվա համաժողովի «Բիզնես նախաձեռնությունները որպես զարգացման շարժիչ ուժ» թեման իր շուրջն էր համախմբել գյուղական զարգացման դերակատարների՝ Չայաստանում համայնքների կայուն առաջխաղացման լավագույն փորձը քննարկելու և համագործակցության նոր հնարավորություններ գտնելու համար:

Համաժողովի բացման հանդիսավոր արարողությանը ավելի քան 200 հյուրերին ուղերձներ հղեցին ՔՈԱՖ-ի հիմնադիր Կարո Արմենը՝ վիզիոն կապով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը, ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը, և Դեբետ գյուղի վարչական ղեկավար Անուշ Սարգսյանը: Հյուրերի թվում էին համայնքի բնակիչներ, տեղական և միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ներդրողներ, ինչպես նաև նախորդ համաժողովների մասնակիցներից շատերը:

Համաժողովի ընթացքում 16 բանախոսների մասնակցությամբ կայացան 4 պանելային քննարկումներ գյուղական զարգացմանն առնչվող թեժ թեմաների շուրջ, ինչպիսիք են գյուղական ստարտափները, Էկոտուրիզմը, ագրոտեխնոլոգիան ու գյուղական ՓՄՁ-ները: Քննարկումներն առավել ուշագրավ և շահագրգիռ էր դարձնում այն հանգամանքը, որ բանախոսներն ու մասնակիցները մարտահրավերների և հնարավոր լուծումների մասին խոսեցին ելնելով իրենց անձնական փորձից:

Ավելի քան 40 ձեռներեցներ, փոքր և միջին ձեռնարկատերեր ու արհեստավորներ Չայաստանի մարզերից և Արցախից համաժողովի շրջանակներում գյուղական ցուցահանդես-վաճառքին ցուցադրեցին տարբեր ապրանքներ, ծառայություններ և ծրագրեր՝ սկսած ՏՏ ոլորտից մինչև գյուղատնտեսություն:

«Համաժողովի նկատմամբ հետաքրքրությունը զգալիորեն աճել է առաջին տարվանից հետո: Դա վկայում է այն մասին, որ համաժողովը գործնականում ծառայում է իր նպատակին, այն է՝ հարթակ տրամադրել գյուղերի զարգացման հետ առնչություն ունեցող դերակարներին՝ նոր, փոխշահավետ կապեր ստեղծելու, ինչպես նաև իրենց բիզնեսները հաջորդ մակարդակին բարձրացնելու նպատակով»,- ասաց ԲՈԱՖ-ի համագործակցության և միջոցառումների ղեկավար Իրինա Իգիթխանյանը:

Համաժողովի օրը նշանավորվեց Տավուշի թեմի մանկապատանեկան երգչախմբի (խմբավար Մարիա Գալստյան) և մեկ հրաշալի ելույթով: Երգչախումբը, որը հայ ունկնդիրների սրտերը շահել էր սեպտեմբերին կայացած Starmus VI փառատոնի ժամանակ, համաժողովի մասնակիցներին դուրեց ազգային միասնության, տոկոսության և հավատքի կոչող հիասքանչ կատարումներով:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ԲՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 66 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ԲՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱԲ նախաձեռնություն: ՍՄԱԲ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ԲՈԱՖ ՍՄԱԲ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: